ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիական Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունների աշխատողների ընտանիքների անդամներին փոխադարձաբար աշխատանքի իրավունքի տրամադրման մասին հայտագրերի փոխանակմամբ կնքվող համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիական Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունների աշխատողների ընտանիքների անդամներին փոխադարձաբար աշխատանքի իրավունքի տրամադրման մասին» համաձայնագրի կնքումը նպատակ ունի երկու պետությունների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունների աշխատողների ընտանիքների անդամների կողմից աշխատանքային գործունեության իրականացման նպատակով կիրառել փոխադարձության սկզբունքը:

Համաձայնագրի նպատակն է կողմերի միջև իրավական պարտավորություն առաջացնող փաստաթղթի միջոցով ստեղծել այն իրավական հիմքը, որը երկու կողմերի դիվանագիտական ծառայողներին ուղեկցող անձանց՝ վերջիններիս ընտանիքի անդամներին, մյուս կողմի պետության տարածքում առանց որևէ խոչընդոտի աշխատանքային գործունեություն ծավալելու հնարավորություն կտա: Համաձայնագիրը կոչված է ապահովելու այդ իրավունքը, ինչպես նաև կարգավորելու դրա ծագման, իրականացման և դադարեցման մեխանիզմները:

Հարկ է նշել, որ ներկայացված Համաձայնագիրը նաև առնչվում է Հայաստանի Հանրապետության և Եվրամիության անդամ պետությունների միջև կնքված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրին, որով վերացվում է ԵՄ պետություններ այցելելիս մուտքի արտոնագրի պահանջը ՀՀ քաղաքացիների համար, ովքեր կրում են դիվանագիտական անձնագիր:

Եվրոպական պետություններից միայն Շվեյցարիայի հետ է Հայաստանի Հանրապետությունը կնքել նման միջազգային պայմանագիր, որն ուժի մեջ է մտել 2012թ. նոյեմբերի 1-ին: Իսկ մի շարք երկրների հետ, այդ թվում Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Բելգիայի Թագավորություն, համաձայնագրերը գտնվում են համաձայնեցման փուլում:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում նշված Համաձայնագրի կնքումը:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ